ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

«ԵՐԵՎԱՆԻ Ն.ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԹԻՎ 2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

«YEREVAN REGIONAL STATE COLLEGE N2 NAMED AFTER N. ATCHEMYAN» SNPO
«ЕРЕВАНСКИЙ РЕГИОНАЛЬНЫЙ ГОСУДАРСТВЕННЫЙ КОЛЛЕДЖ N2 ИМЕНИ Н. АЧЕМЯНА» ГНКО

0062,ք. Երևան, Մոլդովական 37ա, Հեռ./Tel./Тел. + 374 10 67 27 90, Էլ. փոստ/E-mail/Эллочта: n2college.edu@gmail.com,
c. Yerevan, Moldovakan 37a, 0062, г. Ереван, Молдовакан 37а, 0062

N 115 «11» օգոստոսի 2026թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն տիկին Անդրեասյան,

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանի պահանջներով՝ տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Ն. Աճեմյանի անվան թիվ 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում առկա են մանկավարժների թափուր աշխատատեղեր:

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջները.

- մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

➢ ***Մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսներ՝***

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտություն՝

1. «Դրամական միջոցներ, առևտր. դեբիտորական և կրեդիտորական պարտքեր» (108 ժամ),
2. «Սեփական կապիտալ, եկամուտներ և ծախսեր» (72 ժամ),
3. «Ծախսումների հաշվառում» (72 ժամ),
4. «Աշխատակիցների հատուցում» (108 ժամ),
5. «Ֆինանսական գործիքներ, փոխառու միջոցներ» (72 ժամ),
6. «Հետագա չափում, արժեզրկում» (72 ժամ),
7. «Վարձակալության հաշվառում» (72 ժամ),
8. «Գյուղատնտեսական գործունեության հաշվառում» (72 ժամ),
9. «ֆինանսական հաշվետվություններ» (72 ժամ),
10. «Հարկեր և այլ պարտադիր վճարներ» (72 ժամ):

➢ ***Հանրակրթական առարկաներ դասավանդող դասախոսներ՝***

1. «Ֆիզկուլտուրա» (1168 ժամ),
2. «Պատմություն» (640 ժամ):

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջները.

- դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն ՀՀ-ում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

➢ Արտադրական ուսուցման վարպետ՝

1. «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության 2 վարպետ (2 դրույք):

2. «Խոհարարական գործ» մասնագիտության 1 վարպետ (1 դրույք):

Մրցույթին կարող են մասնակցել համապատասխան մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ և մասնագիտական կրթություն ունեցող անձինք:

Խնդրում ենք Ձեր միջնորդությունը համապատասխան ստորաբաժանմանը՝ հրապարակել այն ՀՀ ԿԳՄՄՆ կայքէջում, ինչպես նաև այն կհրապարակվի հաստատության կայքէջում:

Հայտարարության տեքստը կցվում է:

Առդիր՝ 1 /մեկ/ նիշք:

/ՏՆՕՐԵՆ Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ